«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

ՈՐՈՇՈՒՄ

29 հունիսի 2018 թվականի

2018-2019 ուսումնական տարվա ուսումնական բեռնվածության բաշխման առաջնահերթությունների մասին

Լսելով և քննարկելով **«2018-2019 ուսումնական տարվա ուսումնական բեռնվածության բաշխման առաջնահերթությունների մասին»** հարցը (զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պ.Ա.Քալանթարյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. 2018-2019 ուսումնական տարվա բակալավրական նոր կրթական ծրագրով ընդունելությունը գրեթե 55-56%-ով, իսկ մագիստրոսական կրթական ծրագրերով ընդունելությունը մոտ 1/3-ով կրճատվելու, ինչպես նաև նախկին կրթական ծրագրերով միայն ավարտական կուրս ունենալու հետևանքով համալսարանի ընդհանուր ուսումնական բեռնվածությունը զգալիորեն նվազելու է, ինչը տարբեր չափերով է անդրադառնալու առանձին ամբիոնների վրա:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Այն ամբիոններում, որոնցում 2018-2019 ուսումնական տարում ուսումնական բեռնվածության ծավալը կտրուկ նվազում է, ըստ առաջնահերթության ուսումնական բեռնվածություն չնախատեսել.

   1) 75 և ավելի տարիք ունեցող դասավանդողների համար,
   2) գիտական աստիճան կամ կոչում չունեցող դասավանդողների համար,
   3) համատեղությամբ դասավանդողների համար:

3. 63-75 տարիքային միջակայքում դասավանդողների համար հնարավորության դեպքում նախատեսել միայն ոչ լրիվ բեռնվածություն:

4. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսումնա-մեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պ.Ա.Քալանթարյանին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**
2018 թ. Հունիսի 29
Երևան